«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը. սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը

Մեթոդիստ՝ Լիլիթ Գրիգորյան

Մանկապարտեզ՝ «Արմավիրի մարզ, Փարաքյար համայնք, Բաղրամյանի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՍԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 5

1.1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ 5

1.2. ՍԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 10

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ 14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 21

Հավելված 1 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր նախակրթարաններում կիրառվում է փոխներգործուն մեթոդների մեծ համախումբ, որն ապահովում է ուսուցման և ուսումնառության երեխայակենտրոն մոտեցում, համաձայն որի՝ յուրաքանչյուր երեխա պետք է դառնա դասի գործուն մասնակիցը՝ ինքնուրույն անցնելով գիտելիքների ձեռք բերման ճանապարհը: Նա նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով՝ մասնակցելով որոշակի գործընթացի, ընդգրկվելով թե անհատական, թե՛ խմբային աշխատանքներում: Այդ կերպ նա յուրացնում է համագործակցային, սոցիալական փոխազդեցության և հաղորդակցական, ինչպես նաև ձեռք բերած գիտելիքը գործնականում կիրառելու կարողություններ:

Նախակրթական տարիքի երեխաների ստեղծագործական մտածողության ձևավորման և զարգացման համար նախ և առաջ մասնագետն ինքը պիտի օժտված լինի ստեղծագործական մտածողությամբ, ունենա վառ երևակայություն և ստեղծագործական մոտեցումներ: Սա նշանակում է, որ մասնագետի մանկավարժական աշխատանքը պետք է զերծ լինի մեխանիկական կրկնություններից և միօրինակությունից: Հատկապես նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատող մասնագետը պետք է ունենա տարբեր իրավիճակներից արդյունավետ ելքեր գտնելու, իր մասնագիտական գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու կարողություններ, տիրապետի հաղորդակցական կարողությունների և օգտագործի դրանք՝ ի շահ կրթական գործընթացի արդյունավետության, որոնի, մշակի երեխաներին ուսումնասիրելու, նրանց հնարավորությունները բացահայտելու նոր եղանակներ, դասավանդման մոր մեթոդներ ու միջոցներ:

Աշխատանքի նպատակը կրտսեր դպրոցականների շրջանում աշխատանքային տեքնոլոգիաների կիրառման արդյունավետության բացահայտումն ու դրանց ազդեցության ուսումնասիրությունն է:

Աշխատանքի օբյեկտը նախադպրոցական տարիքի սաների վարքագծային դրսևորումներն են՝ ինքնուրույնության դրսևորման համատեքստում:

Աշխատանքի հիմքում դրվել են հետևյալ խնդիրները՝

- Սահմանել ինքնուրույնություն հասկացությունը և որոշակիացնել նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ինքնուրույնության խթանման միջոցներն ու մեթոդները։
- Որոշակիացնել սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանություն հիմնահարցը։
- Նախադպրոցական երեխաների հետ շփման մեջ որոշակի դաստիարակչական տեխնոլոգիաներ կիրառել՝ ուղղված երեխաների ինքնուրույնության բարձրացմանը, ուսումնասիրել երեխաների արձագանքը դրանց կիրառմանը։

Աշխատանքը կազմված է ներածությունից, 2 գլուխներից, եզրակացություններից, պարունակում է օգտագործված գրականության ցանկ և մեկ հավելված։

ԳԼՈՒԽ 1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՍԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. 1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը,դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները:Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սաններին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ , հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

Ստեղծագործական մտածողությամբ օժտված մասնագետը՝

♦ճանաչում է և հաշվի է առնում երեխաների ստեղծագործական հնարավորությունները,

♦հարգում է երեխալի ինքնուրույն աշխատելու ցանկությունը և նպաստում նրա ինքնադրսևորմանը,

♦չի միջամտում երեխաների ակտիվ ստեղծագործական գործընթացին,

♦երեխաներին տալիս է ազատ գործունեության ոլորտի ընտրության հնարավորություն,

♦իրականացնում է ուսումնագիտական ծրագրեր՝ հիմք ընդունելով երեխաների անհատական առանձնահատկությունները և հետաքրքրությունները,

♦անհրաժեշտ պայմաններ է ստեղծում երեխաների ստեղծագործական ունակությունների դրսևորման և զարգացման համար,

♦բոլոր երեխաների համար ստեղծում է հավասար մրցակցային պայմաններ,

♦խրախուսում է և գնահատում երեխաների ամենաչնչին ձեռքբերումները,

♦ուսման մեջ ցածր առաջադիմություն ունեցող երեխաներին ներգրավում է ընդհանուր ստեղծագործական աշխատանքի մեջ,

♦բացահայտում է երևակայության և իրականության միջ առկա հատման կետեր, օգտագործում է դրանք ուսուցման գործընթացում: Երեխաների ստեղծագործական մտածողության զարգացման համար կարելի է կիրառելնաև հետևյալ աշխատանքները՝

♦կավով աշխատանքը,

♦տարբեր նյութերի օգնությամբ նկարելը /սպունգ, փետուր, վրձին, ավազ, կավիճ, ջուր, ալյուր/ և այլն:

Վերահսկողությունը, որպես ուսուցման գործընթացի բաղկացուցիչ մաս, առավել անհրաժեշտ է հենց նախադպրոցական տարիքում: Հենց այս տարիքում են երեխաները ծանոթանում ուսումնական գործունեության առանձնահատկություններին: Ուստի կարևոր են այն հիմքերը, որոնց վրա պետք է կառուցվի նրանց հետագա ուսումնական գործունեությունը: Հաշվի առնելով այս ամենը՝ մշակվել են վերահսկողությանը ներկայացվող մի շարք պահանջներ՝

♦Օբյեկտիվություն՝ վերահսկողություն իրականացնելիս կարևոր է մասնագետի օբյեկտիվ մոտեցումը թե՛ երեխաների նկատմամբ, թե նրանց կատարած աշխատանքների արդյունքները գնահատելիս:

♦Անհատական մոտեցում՝ ուսումնական գործընթացի վերահսկողության գործընթացում կարևոր է յուրաքանչյուր երեխայի նկատմամբ անհատական մոտեցումը՝ նկատի ունենալով նրանց ունակությունների և հնարավորությունների մակարդակները, հոգեկան գործընթացների առանձնահատկությունները, ուսումնական դրդապատճառները և այլն:

♦ Կանոնակարգվածություն՝ ուսումնական գործընթացի վերահսկողության արդյունավետությունը պայմանավորված է նրա իրականացման համակարգվածությամբ և կանոնավորությամբ: Պատահական, անկազմակերպ, չկանոնակարգված և ոչ տեղին վերահսկողությունը չի կարող արդյունավետ լինել:

♦Թափանցիկություն, վերահսկողությունը պետք է լինի պարզ, հասանելի, հիմնավոր և թափանցիկ յուրաքանչյուր երեխայի համար: Երեխաները պետք է միշտ իրազեկվեն, թե երբ և ինչու են այդ մակարդակով գնահատվում:

♦Բազմակողմանիություն, անհրաժեշտ է ստուգել և գնահատել ոչ միայն երեխաների գիտելիքները, այլ նաև նրանց սովորելու պատրաստակամությունը, ստեղծագործականությունը, ինքնուրույնությունը, վերաբերմունքը, ակտիվությունը, մտքի ճկունությունը, գործնական կարողությունները, արժեհամակարգը և այլն:

♦Բարեկրթության նորմերի պահպանում, գնահատելիս երբեք չի կարելի վիրավորել երեխայի անձը, նրա ինքնասիրությունը, արժանապատվությունը: Ուսումնական գործընթացի վերահսկողության ժամանակ մասնագետը պետք է հետևի բարեկրթության բոլոր կանոններին և նույնը սովորոցնի իր սաներին:

♦ Խթանող բնույթը, վերահսկողությունը չպետք է վախեցնի և հիասթափեցնի Նախակրթական տարիքի երեխաներին, այլ հակառակը՝ այն պետք է խթանի նրանց տարաբնույթ գործունեությունը, ոգևորի և աջակցի առաջխաղացմանը:

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ նախակրթական տարիքում են ձևավորվում երեխաների այնպիսի որակներ, ինչպիսիք են համագործակցելը, աշխատասիրությունը, ինքնուրույնությունը, հաղորդակցումը, հետաքրքրասիրությունը, կազմակերպվածությունը, ազնվությունը և այլն: Ակնկալվում է, որ նշված միջոցառումները կնպաստեն ոչ միայն նրանց հաղորդակցման մշակույթի ձևավորմանը, այլև ինքնաճանաչման, ինքնարտահայտման և ինքնագնահատման հմտությունների, ինքնուրույնության մշակմանը:

Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես մասնագետի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով:Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են երեխաները, և, վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Մասնագետը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սանների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում

ցուցաբերելով օգնություն առանձին երեխաներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է մասնագետի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:[1]

Համաշխարհային մանկավարժությունն այսօր մասնագետին/դաստիարակին համարում է մենեջեր՝ ով ղեկավարում է երեխայի զարգացման գործընթացը: Այս իրադրության մեջ մանկավաժը պետք է տիրապետի դասավանդման մեթոդների բոլոր գործիքներին: Այդ իսկ պատճառով, կրթության ժամանակակից չափանիշներին հասնելու գործում, դաստիարակչական տեխնոլոգիաների դերը զգալիորեն մեծանում է [2]:

Ավանդական դիդակտիկ համակարգերում ցանկացած մանկավարժական տեխնոլոգիայի հիմքը բացատրությունն է, իսկ անհատականության վրա հիմնված կրթության մեջ՝ փոխըմբռնումը և ըմբռնումը:

Հիմնարար գաղափարը բացատրությունից դեպի փոխըմբռնում, մենախոսությունից՝ երկխոսություն, սոցիալական վերահսկողությունից դեպի զարգացում, կառավարումից՝ ինքնակառավարում անցումն է: Մասնագետի հիմնական նպատակը ոչ թե «առարկան» սովորեցնելն է, այլ երեխաների հետ շփվելը, միմյանց հասկանալը, նրանց «ազատ արձակելը» ստեղծագործական գործունեության համար: Ստեղծագործությունը, հետազոտությունների կատարման հիմնական միջոցն է: Բայց երեխաների հոգևոր, ֆիզիկական, մտավոր կարողությունները դեռ շատ փոքր են, առավել ևս երբ խոսքը գնում է մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների մասին՝ ինքնուրույն հաղթահարելու ուսուցման և կյանքի առաջ բերված խնդիրները: Երեխային պետք է մանկավարժական օգնություն և աջակցություն[3]:

Առանձնացնում են մանկավարժական տեխնոլոգիաների հետևյալ տեսակը.

- **Ինքնավար տեխնոլոգիաներ,** որոնք բնութագրվում են նրանով, որ մանկավաժը ուսումնական գործընթացի սուբյեկտն է, իսկ երեխան նրա համար օբյեկտ է: Օբյեկտն իր վրա կրում է մանկավարժական ներգործությունը:

---

[1] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ

[2] Атутов П.Р. Технология и современное образование / П.Р. Атутов // Педагогика. - 1996. թ.

[3] Педагогические технологии: Учебное пособие для студентов педагогических специальностей / Под общей ред. В.С. Кукушина. — Москва: ИКЦ «МарТ», 2004 թ. Էջ՝ 336

Սակայն արդյունավետ է այն ուսումնական գործընթացը, որի ժամանակ երեխան ու մասնագետը գտնվում են փոխադարձ հաղորդակցման մեջ, դա ավելացնում է երեխաների ինքնուրույնությունն ու հետաքրքրությունը նյութի հանդեպ:

Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են երեխաների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

1.2. ՄԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պետությունը ելնում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես քաղաքացու դաստիարակման առաջնահերթության սկզբունքներից: Երեխան գտնվում է հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո: Երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից:[4]

Ժամանակակից հասարակության մեջ քաղաքացիների կարևորագույն իրավունքների և ազատությունների շարքում կարևոր տեղ է գրավում յուրաքանչյուրի կրթության իրավունքը, որը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ, այլ կարգավորող իրավական ակտերով:

Դեռևս մանկությունից յուրաքանչյուր մարդ դառնում է իրավունքների ու ազատությունների որոշակի մի ամբողջության կրող: Սակայն մինչև նախորդ հարյուրամյակի կեսերը երեխան չէր դիտարկվում որպես իրավունքի սուբյեկտ: Դրա ապացույցն են 20-րդ դարի հայտնի մտածող Մարիա Մոնտեսորիի ուսումնասիրությունները, որտեղ նշում է, որ «Երեխան մեծահասակի վերարտադրությունն է, որը տնօրինում է նրան այնպես, ասես երեխան լինի իր սեփականության մի մասը: Ստրուկը երբեք այդպես չի պատկանել իր տիրոջը, ինչպես երեխան ծնողներին»: Պատմությունը ցույց է տալիս, որ երջանիկ մանկության մասին կարգախոսները, որոնք ամրագրված չեն իրավական ակտերով, հիմնված չեն պետության ուժեղ և արդար քաղաքականության վրա և չեն ստանում նյութական և ֆինանսական աջակցություն՝ որպես աճող սերնդի բնականոն կենսագործունեության գրավականներ, այդպես էլ մնում են դատարկ բարձրագոչ խոսքեր: Ի տարբերություն ազգային

[4] **ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ** ԳԼՈՒԽ II-ԵՐԵԽԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

իրավունքի՝ միջազգային իրավունքի նորմերով ավելի վաղ են ամրագրվել հասարակության առավել խոցելի խմբերի պաշտպանությանն ուղղված միջոցներ՝ բոլոր նրանց համար, ովքեր զուրկ են իրենց իրավունքները պաշտպանելու իրական հնարավորություններից: Այդ խմբին առաջին հերթին դասվում են երեխաները:

Երեխաների իրավունքների մասին մասին ՄԱԿ-ի կոնվեցիան Հայաստանը վավերացրել է 1992թ.-ի հունիսի 1-ին: Այն մեծ դեր է խաղացել և շարունակում է խաղալ կրթության գործընթացի հումանացման գործում: Կոնվեցիան, ի տարբերություն երեխաների իրավունքների նախկին փաստաթղթերի, իրավականորեն պարտավորեցնող գործիք է և ստորագրող երկրների կառավարություններին պարտավորեցնում է կարևորել երեխաների հիմնահարցերը: Այն ընդգծում է, որ մանկությունն անպաշտպան է և մեծերի օգնության ու աջակցության կարիք ունի, ուստի ավագները պատասխանատու են երեխաների ճակատագրի համար, և կոչ է անում հաշվի առնել, որ մարդու զարգացումն ու կայացումը տեղի են ունենում հենց մանկության տարիներին: Կոնվեցիայում շարադրվում են նաև հատուկ կարիք ունեցող երեխաների իրավունքները, մեծ տեղ է տրվում դպրոցական կարգապահությանը՝ որպես երեխաների անվտանգության երաշխիք: ՀՀ-ում «Երեխաների իրավունքների մասին» օրենքն ընդունվել է 1996թ. մայիսի 21- ին: Օրենքը մի կողմից սահմանում է երեխայի իրավունքները, մյուս կողմից ամրագրում է պետության, համապատասխան մարմինների, քաղաքացիների պարտականությունները երեխաների իրավունքների ուազատությունների պաշտպանության բնագավառում: Այսպիսով, օրենքը կյանքի բոլոր ոլորտներում երեխայի շահերի պաշտպանությաննն ուղղված օրենսդրական նորմ է, որտեղ երեխան իրավունքի ինքնուրույն սուբյեկտ է, և, քանի որ, ի տարբերություն մեծերի, հատուկ պաշտպանության կարիք ունի, ուստի պետությունը ոչ միայն սահմանում է հատուկ իրավունքներ, այլ տալիս է դրանց իրականացման համար հատուկ երաշխիքներ:[5]

Սանն իրավունք ունի՝

1)ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

[5] bb20f16d74a6c47755d1d720d4c40a6a.pdf (armedu.am) - ՍԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.

3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից, ստանալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը բավարարելուն ուղղված աջակցություն.

4) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.

5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սանների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սանի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.

6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

7) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

9) օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

Սակայն, երեխաների իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի պաշտպանության բնագավառում առկա են չհստակեցված խնդիրներ և բազմաթիվ բացթողումներ.

• ՀՀ օրենսդրության մեջ կան դրույթներ, որոնք չեն բխում երկրի սոցիալտնտեսական պայմաններից՝ խոչընդոտելով երեխաների իրավունքների լիակատար իրացմանը:

• Շարունակվում են ալկոհոլի, ծխախոտի գովազդները, մարդկային արժանապատվությունը նվաստացնող, բռնությունը, անբարոյականությունը քարոզող տեղեկատվության տարածումը:

• Առաջնային է մնում երեխաների կրթության որակի մատչելիության և հավասար հնարավորություններ ապահովելու խնդիրը:

• Դեռ ցածր են երեխաների իրավունքների ու ազատությունների, օրիանական շահերի վերաբերյալ ծնողների, մանկավարժների գիտելիքների մակարդակն ու պատրաստվածությունը:

• ՀՀ-ում երեխաները շարունակվում են դիտարկվել մեծահասակների կցորդ և մասնակից չեն իրենց կյանքին վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը: Երեխան պետք է հետաքրքրություն դրսևորելու, հարցեր տալու և պատասխաններ ստանալու, ինքն իրեն ստուգելու և սխալներ գործելու, իմանալու և չիմանալու, ստեղծագործելու և անմիջական լինելու, հարգվելու իրավունք ունենա:

Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք:

Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի:

Երեխայի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից և նրա իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից:

Բռնության ենթարկված երեխայի՝ պաշտպանության կամ աջակցության տրամադրման նպատակով համապատասխան մարմիններ ուղղորդման կարգը, բռնության ենթարկված երեխային տրամադրվող աջակցության ձևերը և տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:[6]

[6] **ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ** Հոդված 9.Բռնությունից երեխայի պաշտպանության իրավունքը

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Կատարել ենք հետազոտություն, որը միտված էր նախապրոցական տարիքի երեխաների ինքնուրույնության բարձրացմանն ուղղված դաստիարակչական մեթոդների կիրառման արդյունավետության գնահատմանը:

Նպատակին հասնելու համար կիրատվել են մի քանի խաղային մեթոդներ մի քանի օրերի (այսուհետ՝ դաս) ընթացքում:

Մի խումբ երեխաների հետ բեմադրել ենք հեքիաթ <<Կենդանիների քաղաքը>>, և այս ամենը օգտագործելով տիկնիկներ:[7]

Ուսումնասիրությունը կատարվել է 5-7 տարեկան 5 երեխաների շրջանում:

Հեքիաթը բեմադրելու համար, անցկացնել ենք մի քանի դասեր, որոնք գործողությունների տեսակներով տարբերվում են, բայց տրամաբանորեն կապված են:

-Ծանոթացում հեքիաթին,

-Հեքիաթի ձայնագրությունը լսելու դաս,

-Նկարչություն. նկարում ենք հեքիաթը,

-Ծեփել կենդանիների ,

-Ձեռքի աշխատանք՝ տիկնիկներ պատրաստել,

-Խաղ՝ <<Ո՞ւմ պատկերն է>>,

-Ապլիկացիյա <<կենդանիները քաղաքում>>

-Թղթից ծառեր, տներ պատրաստել

- Մատների թատրոն, Հեքիաթի դրամատիկացում:

Իսկ ի՞նչ ծավալով և ի՞նչ բնույթի առաջադրանքներ են անհրաժեշտ առաջադրել ինքնուրույն կատարելու համար: Այսպես.

1. Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում մենք առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմի ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան ըոպե է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման

[7] Ստեպանովա Ա.Պ.<<Элементы театрализованной игры на уроках с детьми с отклонениями в развитии>>, հոդված, էջ՝ 2-5

ընթաքում մասնագետը կարող է հասկանալ, թե ինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը:

2.Սանների ինքնուրույն ուսումնական գործունեության համար նախատեսված առաջադրանքերի բնույթը անհրաժեշտ է աստիճանաբար բարձրացնել:

3. Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:

4. Սովորաբար, երեխաները ոչ միաժամանակ են ավարտում ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտեիլքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սաններից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող երեխաների համար:

5. Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր երեխաների ներուժին: Եթե առաջադրվում է պարզ, միատիպ վարժություններ,օրինակ՝բազմապատկման կամ բաժանման, ապա առաջադրանքների տարբերակումը կարգավորվում է ծավալով:Առավել դժվար է, օրինակ ընտրել յուաքանչյուր երեխաի ներուժի համապատասխան առաջադրանքներ:Այդ պատճառով նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սանների առանձին խմբերի ներուժը:

Սակայն պետք է նշել ,որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը բավականին բարդ է: Ընտրել հեշտ առաջադրանք, որը համապատասխանում է թույլ երեխայի ներուժին, դժվար չէ: Բայց այստեղ մի մեծ վտանգ է թաքնված: Եթե թույլ կարողություններ ունեցող երեխան դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով, ապա այդպես կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները:Այդ պատճառով այդպիսի սանների համար ճանաչողական առաջադրանքների ընտրության ընթացքում մանկավաժը իր առջև նպատակ է դնում.Սկզբում աշխատանքում ներառել պարզ առաջադրանքներ, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծել առավել բարդ նյութեր:

6. Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված առաջադրանքները ցանկալի է, որ երեխաներից պահանջեն կամային ջանքեր:

7. Ինքնուրույն աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում:Միայն այդ դեպքում ինքնուրույն աշխատանքը կնպաստի սանների ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը:

8.Ցանկալի, որ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սաններին:

9. Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի երեխային, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման «մերձակա գոտում», պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել:

10. Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել: Պատահականության բացառումը նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը:

11. Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում երեխաներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի:[8]

Անխոս, ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, հիմնվելով ողջամիտ նպատակահարմարության վրա, հակված են հաշվի առնել հնարավորինս շատ գործոններ, որոնք ազդում են ուսման գործընթացի վրա և այս պայմաններում ուսուցման գործընթացում մասնագետի տեղն ու դերը զգալիորեն փոխվում են:

Երեխաներին հետևելով կարելի է ենթադրություն անել, որ բոլոր խաղերը երեխաներից պահանջում են արտիստիկություն, փոխակերպման, արագ կողմնորոշվելու ունակություն, խաղընկերների հետ ինտենսիվ շփում, ամոթխածության, սեփական անձի նկատմամբ անվստահության հաղթահարում :

[8] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս I, «Զանգակ» հրատարակչություն, 2013թ.

Այստեղ օգնության կարող են գալ օրինակ թատերականացված խաղերը, որոնք կարող են օգտագործվել դասերի ընթացքում: Խաղերին պետք է մասնակցեն բոլոր երեխաները, անկախ մտավոր զարգացվածության խնդիրների առկայությունից:

Այնպես, ինչպես հենց դասը, խաղը նույնպես կատարում է ուսուցման ճանաչողական, դաստիարակչական խնդիրները:

Հատկապես պետք է ուշադրություն դարձնել այն թատերական խաղերին, որոնք հիմնված են կրկնողության և ամրապնդման վրա:

Խաղի տեղը և բնույթը որոշում է ուսուցիչը՝ չթերագնահատելով խաղի մասնակիցներից և ոչ մեկի դերն ու նշանակությունը:

Խաղը, որը հմտորեն մտցվում է ուսուցման պրոցես, մտավոր զարգացվածության խնդիրներող երեխային թույլ է տալիս ուրախություն ապրել և հաղթահարել ինտելեկտուալ բարդությունները:

Խաղային տեխնոլոգիաների օգտագործումը ստեղծում է բարենպաստ պայմաններ այնպիսի կարևոր հատկանիշների ձևավորման համար, ինչպիսիք են ընդհանուր դրական տրամադրվածությունը դպրոցի և դասավանդվող առարկայի նկատմամբ, սեփական կարողությունները անընդհատ ընդլայնելու ցանկությունը:[9]

Թատերականացված խաղերը տիրապետելու չափից կախված, աստիճանաբար, երեխաները սկսում են հանդես գալ կերպարի անունից: Նրանք սկսում են խոսել իրար հետ, սկսում են իրար գովասանքի խոսքեր ասել, այնպես ինչպես գրված է սցենարում: Այսպիսով երեխաները սովորում են ոչ վերբալ շփմանը, խաղընկերոջ ուշադրությունը անխոս գրավելուն, հետաքրքրվածությունը արտահայտելուն, ժեստերի և միմիկայի գործադրմանը:

Այսպիսի ձևաչափի կիրառման արդյունքում երեխաները մեծահասակին սկսում են ընկալել որպես ընկեր: Երեխան սկսում է վստահել դաստիարակին:

Երեխաները ակտիվ ժպտում են, նայում են դաստիարակի աչքերին: Երեխաների մոտ հետաքրքրություն է առաջանում, երբ նրանք ոչ միայն խոսում են՝ այլ նաև գործում որպես հեքիաթի հերոսներ:

[9] Ֆաիզովա Ի. Ի. <<Технология воспитания и обучения детей с проблемами>>, հոդված, 2017 թ, էջ՝ 4-15:

Նրանք փորձում են բեմական շարժումներ անել՝ հետևելով մեկը մյուսին: Իրենց աշխատանքում դաստիարակները օգտագործում են ձայնային հոլովակներ՝ խաղի ձայնային ձևավորման համար:

Երաժշտությունը երեխաներին օգնում է իրենց հերոսների շարժումներն անել, ընդգծել այդ հերոսների անհատականությունը, միաժամանակ կատարելագործելով կոորդինացումը, ինչը կատարվում է ռիթմի զգացողության միջոցով:

Իսկ շարժումներն, իրենց հերթին օգնում է երեխաներին բարձրացնել խոսքաշարժողական անալիզատորի ակտիվությունը, հաշվեկշռում է գրգռման և արգելակման պրոցեսները:

Անկախ խաղերի բազմազանությունից, դաստիարակը պետք է հիշի այն ընդհանուր կանոնները , որոնցով պետք է առաջնորդվի խաղ ընտրելուց:

-Խաղերի հոգեբանական, դաստիարակչական մտահաղացումը պետք է համապատասխանի մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների տարիքային և ինտելեկտուալ հնարավորությունների հետ,

-Պետք է գնահատել խաղի ընդհանուր մտահաղացման համապատասխանությունը խաղի կանոնների և բովանդակությանը:

-Վերլուծել է պետք խաղը ամբողջությամբ և նրա աստիճանական զարգացումը

-Վերլուծման է ենթական նաև խաղի ազդեցությունը երեխայի պահվածքի վրա և երեխայի պահվածքը խաղի ընթացքում, նրա ինտելեկտուալ և ֆիզիկական հնարավորությունները և դրանք կարգավորելու կարողությունը:[10]

Երեխաների ինքնուրույնությունը խթանող կիրառված տեխնոլոգիան գնահատելու համար հոգեբանին և մեթոդիստին խնդրեցինք գրավոր կերպով պատասխանել մի քանի հարցերի.

Հարցին, թե արդյոք դաստիարակը հասավ պարապմունքի նպատակներին և որ կարողությունների զարգացմանն էին ուղղված աշխատանքները, հարցման երկու մասնակիցներն էլ պատասխանեցին, որ պարապմունքի նպատակներին հասնելու համար նման մի շարք պարապմունքներ են անհրաժեշտ: Ընդ որում հոգեբանի կարծիքով

[10] Ստեպանովա Ա. Օ. <<Методика игры с коррекционно-развивающими технологиями.>> ACADEMA, 2003, էջ՝ 270 с.

երեխաների վրա պարապմունքի դրական ազդեցությունը անհերքելի է և որ պարապմունքները օգնեցին ավելի անմիջական լինել և ազատորեն արտահայտվել։

Հարցին, թե ինչպես էին զգում իրենց երեխաները, հարցման մասնակիցները պատասխանեցին, որ ակնհայտ էին երեխաների դրական վերաբերմունքը և հույզերը։ Վերջիններս փաստեցին, որ երեխաները ժպիտով և պատրաստակամությամբ էին մասնակցում դասերին։

Վերջում խնդրեցինք հիմնավորել, թե արդյո՞ք դաստիարակի կողմից հետազոտվող թեմայի կարևորությունը մեծ է նախադպրոցական կրթության մեջ և ի՞նչ խնդիրների լուծմանն է միտված այն։ Պատասխանները հետևյալն էին.

Դաստիարակը սաներին ուղղորդողներն են։ Նրանք են ճիշտ հարցեր տալիս և սպասում, որ սաները իրենց պատասխանները գտնեն։ Յուրաքանչյուր դաստիարակի պարտքն է գտնել մոտեցումը սաներից յուրաքանչյուրին։

Դաստիարակներից յուրաքանչյուրը հստակ գիտակցում էր, որ իրենց գործողությունները կարևորվում են միայն դասի նպատակներից ելնելով. այն է՝ դասերին սաների ներգրավվածության ավելացում և ինքնուրույնության խթանում։ Բոլոր դասերի արդյունավետությունը աներկբա է։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նկարագրված դաստիարակչական տեխնոլոգիայի ընթացքում երեխաները ցուցաբերեցին հետաքրքրվածություն, նրանցից որոշները դարձան ավելի անմիջական: Եվ որ ամենակարևորն է, խաղի ընթացքում երեխաները միշտ ժպտում էին: Առաջին մի քանի փուլերի ընթացքում, երբ նրանք ծանոթանում էին հեքիաթին, նկատվցին որոշ պահեր, երբ երխաների հետաքրքրությունը նվազում էր և ուշադրությունը՝ շեղվում, իսկ էր երբ նրանցից պահանջվում էր նկարներ նկարել, տիկնիկներ պատրաստել (տես.՝ հավելված 1) , նրանց մոտ նկատվում էր ինքնավստահության խնդիր, բայց աստիճանաբար այդ բարդույթները ևս հաղթահարվեց և նրանք առաջադրանքները կատարեցին ինչպես որ հարկն էր:

Մի կարևոր դետալի մասին ևս պետք է խոսել. բեմականացման համար նախատեսված դերերը հավասարազոր կարևորություն ունեին, իսկ երեխաները թե' փորձերի, և թե' բեմականացման ընթացքում կերպարի մեջ էին : Վերջինիս ընթացքում նրանք զարգացրեցին իրենց բառապաշարը, դարձան առավել անմիջական:

Այսպիսի համակարգով աշխատանքը՝

- թույլ է տալիս օգտագործել երեխայի ստեղծագործական տարբեր ունակություններ, ուղղորդել դրանք որոշակի վերջնական արդյունքի:
- առաջին հայացքից այսքան տարբեր խաղերն ու միջոցառումները, որոնց պետք է նվիրել մեկ կամ մի քանի դաս , զգալիորեն բարձրացնում են երեխաների հետաքրքրությունը այս կամ այն երևույթի նկատմամբ՝ ակտիվացնելով նրանց մտավոր, խոսակցական, ստեղծագործական գործոունեությունները:

Ընդհանուր առմամբ խաղային տեխնոլոգիայի կիրառումը այս խմբի երեխաների հետ, գնահատում ենք շատ արդյունավետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ
2. Атутов П.Р. Технология и современное образование / П.Р. Атутов // Педагогика. - 1996. թ.
3. Педагогические технологии: Учебное пособие для студентов педагогических специальностей / Под общей ред. В.С. Кукушина. — Москва: ИКЦ «МарТ», 2004 թ. էջ՝ 336
4. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ ԳԼՈՒԽ II-ԵՐԵԽԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ
5. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ
6. Ստեպանովա Ա.Պ.<<Элементы театрализованной игры на уроках с детьми с отклонениями в развитии>>, հոդված, էջ՝ 2-5
7. Ստեպանովա Ա. Օ. <<Методика игры с коррекционно-развивающими технологиями.>> ACADEMA, 2003, էջ՝ 270 с.

Հավելված 1

Նկ.1 <<Կենդանիների քաղաքը>>,